

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ակտիվության աճի տեմպը սպասվածի նման աստիճանաբար դանդաղում է՝ նախորդ տարիներին բարձր տնտեսական աճ ապահովող գործոնների ազդեցությունների աստիճանական չեզոքացմանը զուգահեռ: 2024թ. հոկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 4.2%՝ շուրջ 2.8 տոկոսային կետով դանդաղելով նախորդ ամսվա ցուցանիշից, իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների ՏԱՑ-ը կազմել է 8.1%՝ հունվար-սեպտեմբերի համեմատ դանդաղելով 0.6 տոկոսային կետով: Եթե այլ ցնցումներ տեղի չունենան, ապա ՏԱՑ-ը կշարունակի դանդաղել նաև ընթացիկ տարվա հաջորդ՝ վերջին երկու ամիսներին՝ պայմանավորված նախորդ տարվա վերջում մեծ բազայի առկայությամբ:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹



2024թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և արդյունաբերության աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 8.0 և 2.5 տոկոսային կետ (դանդաղելով նախորդ ամսվա 8.3 և 2.7 ցուցանիշների համեմատ): Տնտեսական ակտիվության աճին փոքր դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 1.4 և 0.7 տոկոսային կետով:


¹ Նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-հոկտեմբերին, տոկոսային կեստ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության աճի տեմպը փոքր-ինչ արագացել է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Տարվա կեսից սկսած արդյունաբերության աճի տեմպը բավական ցածր էր, սակայն վերջին ամիսներին փոքր-ինչ արագացել է՝ հոկտեմբերին հասնելով 5.3%-ի: Հունվար-հոկտեմբեր ամիսներին արդյունաբերության աճը կազմել է 11.7%՝ հունվար-սեպտեմբերի համեմատ դանդաղելով 0.9 տոկոսային կետով: Հաշվի առնելով նախորդ տարվա վերջում արդյունաբերության աճի կտրուկ արագացումը, որն ապահովող գործոնները արդեն գրեթե չեզոքացել են, արդյունաբերության աճի տեմպը տարվա վերջին ամիսներին էականորեն կդանդաղի:

Արդյունաբերության հունվար-սեպտեմբեր² ամիսների աճը շարունակել է պայմանավորված լինել հիմնականում մշակող արդյունաբերության աճով, որը, սակայն, աստիճանաբար դանդաղում է: 2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մշակող արդյունաբերության աճը կազմել է 18.9%՝ հունվար-օգոստոսի 20.7%-ի փոխարեն և ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է 12.6 տոկոսային կետով, մինչդեռ հունվար-օգոստոսի նպաստումը կազմել էր 13.7 տոկոսային կետ: Արդյունաբերության աճին նպաստել են նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտների աճերը՝ համապատասխանաբար 1.5 և 0.1 տոկոսային կետով:

Հանքարդյունաբերության ոլորտում շարունակում է գրանցվել անկում: Հունվար-սեպտեմբերին անկումը կազմել է 7.8%, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 1.5 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության աճը շարունակում է պայմանավորված լինել «հիմնական մետաղների արտադրություն» գործունեությամբ, առանց որի մշակող արդյունաբերության ոլորտում կգրանցվեր անկում: Մասնավորապես, «հիմնական մետաղների արտադրություն» ենթաօլորտը հունվար-սեպտեմբերին աճել է 3.3 անգամ՝ մշակող արդյունաբերությանը նպաստելով 19.5 տոկոսային կետով, իսկ ընդհանուր արդյունաբերությանը՝ 13.0 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության աճին դրական նպաստում ունեցող ենթաճյուղերից կարելի է առանձնացնել նաև «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն», «էլեկտրական սարքավորանքի արտադրություն» և «սննդամթերքի արտադրություն» ենթաճյուղերը, որոնց նպաստումները մշակող արդյունաբերությանը կազմել են համապատասխանաբար 1.0, 0.7 և 0.4 տոկոսային կետ:


Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերության մի շարք ենթաօլորտներ շարունակում են անկում ապրել: Մասնավորապես, էական են «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն», «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն» և «խմիչքի արտադրություն» ենթաճյուղերի բացասական նպաստումները, որոնք միասին կազմել են 2.3 տոկոսային կետ:

² Արդյունաբերության հոկտեմբեր ամսվա տվյալները՝ ըստ ենթաօլորտների, դեռևս չեն հրապարակվել:

Ընդհանուր առմամբ, առանց «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղի, արդյունաբերության ոլորտը հունվար-սեպտեմբերին անկում է ապրել 0.4%-ով, իսկ մշակող արդյունաբերությունը՝ 0.6%-ով:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը շարունակում է աստիճանական դանդաղումը, սակայն դեռևս մնում է բարձր մակարդակում: 2024թ. հոկտեմբերին շինարարության աճը կազմել է 13.5%՝ սեպտեմբերի համեմատ դանդաղելով 1.2 տոկոսային կետով, իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների աճը՝ 15.5%՝ դանդաղելով 0.4 տոկոսային կետով: Շինարարության աճը հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության աճով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպը որոշակի արագացումից հետո կրկին դանդաղել է: 2024թ. հոկտեմբերին ծառայությունների ոլորտի աճը կազմել է 5.2%՝ շուրջ 6.4 տոկոսային կետով ցածր լինելով նախորդ ամսվա ցուցանիշից: Արդյունքում ծառայությունների աճը հունվար-հոկտեմբերին նույնպես դանդաղել է՝ 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 5.8%:

Ըստ հունվար-սեպտեմբեր³ ամիսների տվյալների՝ ծառայությունների աճը հիմնականում պայմանավորված է եղել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտով, որի աճը կազմել է 22.0%, իսկ նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին՝ 5.8 տոկոսային կետ: Ծառայության մյուս տեսակները նույնպես աճել են և դրական նպաստում ունեցել ոլորտի աճին: Տրանսպորտի և ՏՏ ոլորտի ծառայությունները շարունակել են նվազել՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 1.8-ական տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը փոքր-ինչ արագացել է: Առևտրի ոլորտում հոկտեմբերին գրանցվել է 13.7% աճ, որը 0.3 տոկոսային կետով բարձր է նախորդ ամսվա ցուցանիշից, սակայն ցածր է նախորդ տարվա նույն ամսվա աճից: Ընդ որում, առևտրի աճի արագացումը տեղի է ունեցել նախորդ տարվա բարձր բազայի նկատմամբ, որի բացակայության պայմաններում աճի արագացումն ավելի մեծ կլիներ:

³ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁴

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման աճի տեմպի դանդաղումը շարունակվում է: 2024թ. հոկտեմբերին արտահանման աճը կազմել է 23.1%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 17.4 տոկոսային կետով: Հունվար-հոկտեմբեր ամիսների արտահանման ծավալների աճը նույնպես շարունակել է դանդաղել՝ կազմելով 95.1%՝ հունվար-սեպտեմբերի 105.6%-ից:

2024թ. հունվար-սեպտեմբեր⁵ ամիսներին արտահանման աճը շարունակել է գրեթե ամբողջությամբ պայմանավորված լինել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանմամբ, որն աճել է շուրջ 6.3 անգամ՝ արտահանման աճին նպաստելով 113.5 տոկոսային կետով:

Արտահանման աճին դրական նպաստում են ունեցել նաև «հանքահումքային արտադրանք», «բուսական ծագման արտադրանք» և «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր նպաստումն արտահանման աճին եղել է բավական փոքր՝ 2.7 տոկոսային կետ: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով աճին նպաստումը եղել է կա՛մ զրոյական, կա՛մ բացասական:


Առանց վերը նշված «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (ըստ էության՝ ոսկու

⁴ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁵ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

վերաարտահանման) ընդհանուր արտահանման անկումը հունվար-սեպտեմբերին կազմում է 8.4%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման աճի տեմպը նույնպես էականորեն դանդաղել է: 2024թ. հոկտեմբերին ներմուծման աճը եղել է բավական ցածր՝ 6.6%: Աճի տեմպի էական դանդաղումը պայմանավորված է ինչպես ոսկերչական ապրանքների վերաարտահանման ծավալների նվազմամբ, այնպես էլ այլ ապրանքախմբերի գծով ներմուծման ծավալների նվազմամբ կամ ցածր աճերով՝ կապված ներքին պահանջարկի դանդաղ աճերով:

2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսների⁶ տվյալներով ներմուծման աճը, արտահանման նման, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի շուրջ 6.1 անգամ աճով, ինչն ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 60.9 տոկոսային կետով:

Ներմուծմանն էական բացասական նպաստում է ունեցել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի գծով ներմուծման 52.6% անկումը՝ ներմուծման աճին հակազդելով 9.0 տոկոսային կետով:


Առանց «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստումը հաշվի առնելու, ներմուծման ծավալները հունվար-սեպտեմբերին նվազել են 6.7 տոկոսային կետով:

⁶ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁷

Աշխատավարձի աճի տեմպը մնում է ցածր մակարդակում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 6.6%-ով (հունվար-օգոստոսի համեմատ մնալով անփոփոխ)⁷ կազմելով 280,256 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.5%-ով (հունվար-օգոստոսի համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով)⁷ կազմելով 305,269 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը կազմել է 217,416 դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 9.8%-ով (հունվար-օգոստոսի համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով):


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվար-սեպտեմբերին, %



⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



ՀՀ դրամի փոխարժեքը վերջին ամիսներին բավական կայուն է: Դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ մայիս-հոկտեմբեր ամիսներին մնացել է կայուն՝ միջինում 388 դրամի մակարդակում: Այդ պայմաններում, ՀՀ դրամը նախորդ տարվա նույն ամիսների համեմատ արժեզրկված է եղել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ՝ համապատասխանաբար 0.6% և 1.2%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը վերջին երկու ամիսներին ունեցել է արժևորման միտում՝


հիմնականում պայմանավորված լինելով ՌԴ ռուբլու արժեզրկմամբ: Հոկտեմբերին ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 4.0 դրամ՝ սեպտեմբերի համեմատ նվազելով 0.2 դրամով: Հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ դրամը ռուբլու նկատմամբ եղել է արժևորված՝ շուրջ 8.5%-ով (որի տեմպը, սակայն, աստիճանաբար դանդաղում է):

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁸

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճը մնում է ցածր մակարդակում: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվար-հոկտեմբերին կազմել են 2,073.4 մլրդ դրամ՝ աճելով 6.5%-ով, որը հունվար-սեպտեմբերի համեմատ ցածր է 0.1 տոկոսային կետով: Պետական բյուջեի հարկային եկամուտների աճը հունվար-հոկտեմբերին կազմել է 6.8%՝ հունվար-սեպտեմբերի համեմատ մնալով նույն մակարդակում: Ոչ հարկային եկամուտների գծով մուտքերը նվազել են 5.7%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհներն աճել են շուրջ 2.1 անգամ (6.9 մլրդ դրամով):

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-հոկտեմբերին հիմնականում պայմանավորված է եղել եկամտային հարկի (աճը՝ 9.2%), բնապահպանական և բնօգտագործման վճարների (աճը՝ 76.8%) և շահութահարկի (աճը՝ 5.6%) աճերով,

⁸ ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների վերլուծությունն իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող տվյալների հիման վրա: Ընդ որում, սկսած 2024թ. հունիսից 2023-ի և նախորդ տարիների ցուցանիշները հրապարակվում են հիպոթեթային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձները ընդհանուր ցուցանիշներում ներառված, ինչի հետևանքով սույն տեղեկանքում պետական բյուջեի ցուցանիշների աճերը տարբերվում են նախորդ ամիսներին հրապարակված տեղեկանքների ցուցանիշներից:

որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.5, 1.9 և 0.9 տոկոսային կետ:


ԱԱՀ-ի գծով մուտքերը հունվար-հոկտեմբեր ամիսներին նվազել են 1.8%-ով՝ ընդհանուր հարկային եկամուտներին հակազդելով 0.6 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված ներմուծման (ոսկու վերաարտահանմամբ ճշգրտված) նվազմամբ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. հունվար-հոկտեմբեր		2024թ. հունվար-հոկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	15.7	15.7	6.8	6.8
Ավելացված արժեքի հարկ	16.4	5.4	-1.8	-0.6
Ակցիզային հարկ	14.1	0.8	1.5	0.1
Շահութահարկ	44.1	5.5	5.6	0.9
Պետական տուրք	-43.7	-2.6	20.6	0.6
Մաքսատուրք	44.8	1.2	3.0	0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-44.2	-2.2	76.8	1.9
Այլ հարկեր	33.0	0.9	11.6	0.4
Շրջանառության հարկ	27.3	0.7	17.2	0.5
Եկամտային հարկ	17.4	4.6	9.2	2.5
Սոցիալական վճարումներ	42.4	1.4	14.9	0.6

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը շարունակել է արագանալ: Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվար-հոկտեմբերին կազմել են 2,284.9 մլրդ դրամ՝ աճելով 16.3%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպն արագացել է 0.6 տոկոսային կետով): Ընթացիկ ծախսերի աճը կազմել է 14.3%՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 12.4 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները աճել են բարձր տեմպով՝ 28.7%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 3.9 տոկոսային կետով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), մլրդ դրամ



Բյուջեի պակասուրդն էականորեն աճել է: 2024թ. հունվար-հոկտեմբերին պետական բյուջեի ծախսերն էականորեն գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում ձևավորվել է շուրջ 211.5 մլրդ դրամի չափով պակասուրդ, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում պակասուրդը կազմել է ընդամենը 19.0 մլրդ դրամ:

5.4. Պետական պարտք


2024թ. հոկտեմբերին ՀՀ պետական պարտքի ծավալի աճի տեմպը կտրուկ արագացել է: Պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 12.6 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ աճելով 13.6%-ով (նախորդ ամսվա աճը՝ 10.4%): Կառավարության պարտքի ծավալը նույն ժամանակահատվածում հասել է 12.1 մլրդ ԱՄՆ դոլարի՝ աճելով 14.5%-ով (նախորդ ամսվա աճը՝ 11.0%):

Պարտքի աճը պայմանավորված է ներքին պարտքի (արտահայտված ՀՀ դրամով)՝ շուրջ 28.2% աճով, մինչդեռ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով) շարունակել է նվազել՝ շուրջ 0.9%-ով: Արդյունքում հոկտեմբերի վերջի

դրությամբ ներքին պարտքի կշիռն ընդհանուր պարտքի կառուցվածքում աճել է՝ կազմելով 52.4%:

2024թ. հոկտեմբերին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են: Պետական պարտատոմսերի միջին տոկոսադրույքները (եկամտաբերությունը) հոկտեմբերին նվազել են ինչպես նախորդ ամսվա, այնպես էլ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ: Այսպես, կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են նախորդ ամսվա համեմատ՝ համապատասխանաբար 0.2 և 0.1 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ 1.6 և 0.8 տոկոսային կետով: Հոկտեմբերին տեղի է ունեցել նաև երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխում, որոնց եկամտաբերությունը կազմել է 10.0%՝ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ նվազելով 0.9 տոկոսային կետով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը կայունացել է ցածր մակարդակում: Գնաճի տեմպի դանդաղ արագացման միտումը վերջին ամիսներին չի շարունակվում, և գնաճը կայունացել է 0.6% մակարդակում, իսկ տարեսկզբից մինչև հոկտեմբեր միջին գնաճը զրոյական է: Նույն ժամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկը աստիճանաբար նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը՝ ընդհանուր առմամբ 2.0 տոկոսային կետով, որոնցից վերջինը՝ հոկտեմբերի վերջին՝ 0.25 տոկոսային կետով:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների ծավալի աճի տեմպը վերջին ամիսներին որոշակիորեն կայունացել է: Ընդհանուր ավանդների աճը 2024թ. հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 9.1%, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ աճի տեմպը որոշակիորեն արագացել է՝ կազմելով 6.4%՝ նախորդ ամսվա 5.0%-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը պայմանավորված է ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 11.6% և 1.2%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2024թ. հոկտեմբերին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 5.0 տոկոսային կետով: Էական է եղել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը՝ կազմելով շուրջ 12.0%՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 2.7 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


Վարկերի աճի տեմպը նույնպես կայունացել է: 2024թ. հոկտեմբերին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 21.3%-ով: 2023թ. դեկտեմբերի համեմատ վարկերի ծավալի աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 16.5%:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը տեղի է ունեցել ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնք աճել են շուրջ 23.4%-ով և ընդհանուր վարկերի աճին նպաստել են 22.2 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտների վարկերը նվազել են շուրջ 16.4%-ով՝ ընդհանուր վարկերի աճին հակազդելով 0.8 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված ոչ ռեզիդենտների դրամային վարկերի նվազմամբ:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է եղել և՛ իրավաբանական անձանց, և՛ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճով, որոնք կազմել են համապատասխանաբար 23.2% և 23.6%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով 11.7-ական տոկոսային կետով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ⁹




Հոկտեմբերին վարկերի աճին զգալի նպաստում են ունեցել հիպոթեքային (աճը՝ 28.5%) և սպառողական (աճը՝ 24.3%) վարկերի աճերը՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 6.0 և 5.3 տոկոսային կետով: Տնտեսությանն ուղղվող վարկերի ծավալներն աճել են բոլոր ճյուղերում: Ընդ որում՝ դրական է նաև արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալի աճի տեմպը, որը հոկտեմբերին կազմել է 11.1%՝ ընդհանուր վարկերին նպաստելով 1.1 տոկոսային կետով: Արդյունաբերության վարկերի աճը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտում վարկերի աճով (աճը՝ 55.4%): Մշակող արդյունաբերության վարկերի աճը նույնպես դարձել է դրական, թեև լինելով ցածր՝ 5.2%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով 0.3 տոկոսային կետով:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի ծավալները մնում են ցածր մակարդակում: 2024թ. սեպտեմբերին դրամական փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է ընդամենը 97.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ մնալով գրեթե նույն մակարդակում: Հունվար-սեպտեմբեր ամիսներին զուտ ներհոսքը շուրջ 33.3%-ով ցածր է եղել նախորդ տարվա ցուցանիշից՝ պայմանավորված ինչպես ներհոսքի կրճատմամբ, այնպես էլ արտահոսքի աճով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի տեմպը շարունակել է դանդաղել՝ հոկտեմբերին արձանագրելով այս տարվա ամենացածր ցուցանիշը՝ 4.2%, որը շուրջ 2.8 տոկոսային կետով ցածր է նախորդ ամսվա ցուցանիշից: Արդյունքում հունվար-հոկտեմբերի աճը ևս դանդաղել է նախորդ ամսվա կուտակային ցուցանիշի համեմատ: Հաշվի առնելով նախորդ տարվա վերջի բարձր բազան՝ ՏԱՑ-ը կշարունակի դանդաղել նաև ընթացիկ տարվա հաջորդ՝ վերջին երկու ամիսներին:

2. Արդյունաբերության և արտահանման աճերը հիմնված են ՀՀ տնտեսության հետ քիչ կապ ունեցող գործոնների վրա: Ինչպես արդյունաբերության, այնպես էլ արտահանման կառուցվածքում բարձր աճ

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2024թ. հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ապահովող գործոնը ոսկերչական գործունեությունն է, որը, ըստ էության, վերաարտահանում է: Առանց այդ գործունեության նպաստման, ընդհանուր արդյունաբերությունն անկում է ապրել 0.4%-ով, իսկ արտահանումը՝ 8.4%-ով: Սա ՀՀ տնտեսության արդյունաբերական և արտահանելի հատվածի իրական միտումն է, ինչը բնականաբար մտահոգիչ է, և այս ուղղությամբ տնտեսական քաղաքականության ակտիվ քայլերի անհրաժեշտությունն առավել է մեծանում:

3. Գնաճը գտնվում է բավական ցածր մակարդակում, իսկ միջին գնաճը զրոյական է՝ չնայած ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության շարունակական մեղմացմանը: Ընթացիկ տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ն շուրջ 2.0 տոկոսային կետով նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը, սակայն գնաճը միջինում մնացել է 0%-ի միջակայքում: Թեև գնաճի ցածր ցուցանիշը պայմանավորվում է նաև ներմուծված գների ցածր աճով, այնուամենայնիվ, այն արտացոլում է նաև ներքին տնտեսությունում ցածր պահանջարկը:

4. Պետական բյուջեի պակասուրդը մեծ արագությամբ աճում է: Տնտեսական ակտիվության տեմպը աստիճանաբար դանդաղում է, ինչը նշանակում է, որ 2024թ. փաստացի իրական ՀՆԱ-ի աճը կլինի ավելի ցածր, քան բյուջեի հիմքում դրված 7.0%-ը (կառավարությունը նույնպես վերանայել է աճի կանխատեսումը դեպի ներքև): Սակայն բյուջեի եկամուտների և ծախսերի ներկա աճերի պահպանման պարագայում պակասուրդը կհասնի պլանավորված մակարդակին՝ ՀՆԱ-ի նկատմամբ լինելով ավելի բարձր, քան նախատեսվում էր: Արդյունքում կառավարության պարտքի մակարդակը ևս կգերազանցի պլանավորված ցուցանիշը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: